ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

МАТЕРИАЛЫ ЕЖЕГОДНОЙ НАУЧНОЙ СЕССИИ 2015 ГОДА

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

PROCEEDINGS OF THE ANNUAL SCIENTIFIC SESSION OF 2015

1.6 (16)

Общественные науки (Социология, экономика, философия, психология, журналистика)

Social Sciences (Sociology, Economics, Philosophy, Psychology, Journalism)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2016

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829-4367

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2015 Թ. ՏԱՐԵԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ

1.6 (16)

Հասարակական գիտություններ
(Սոցիոլոգիա, տնտեսագիտություն, փիլիսոփայություն, հոգեբանություն, ժուռնալիստիկա)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издается по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

տ.գ.դ., պրոֆ. Վ. Բոստանջյան
տ.գ.դ., պրոֆ. Մ. Միքայելյան
տ.գ.դ., պրոֆ. Ս. Ղանթարջյան
տ.գ.դ., պրոֆ. Թ. Թորոսյան
տեխ.գ.դ., պրոֆ. Ա. Առաքելյան
տ.գ.դ., դոց. Հ. Մնացականյան
ս.գ.թ., դոց. Հ. Վերմիշյան
փ.գ.թ., դոց. Ա. Սարգսյան
հ.գ.թ., դոց. Ն. Խաչատրյան
հ.գ.թ., դոց. Հ. Հովհաննիսյան
ս.գ.թ. Ա. Բաբլոյան
ս.գ.թ. Յու. Մելքումյան
բ.գ.թ. Մ. Կարապետյան

Редакционная коллегия:

д.э.н., проф. В. Бостанджян
д.э.н., проф. М. Микаэлян
д.э.н., проф. С. Кантарджян
д.э.н., проф. Т. Торосян
д.т.н., проф. А. Аракелян
д.э.н., доц. А. Мнацаканян
к.с.н., доц. А. Вермишян
к.ф.н., доц. А. Саргсян
к.п.н., доц. Н. Хачатрян
к.п.н., доц. Г. Ованисян
к.с.н. А. Баблоян
к.с.н. Ю. Мелкумян
к.ф.н. М. Карапетян

Editorial Board

DSc, Prof. V. Bostanjyan
DSc, Prof. M. Mikaelyan
DSc, Prof. S. Ghantarjyan
DSc, Prof. T. Torosyan
DSc, Prof. A. Arakelyan
DSc, Associate Prof. H. Mnatsakanyan
PhD, Associate Prof. H. Vermishyan
PhD, Associate Prof. A. Sargsyan
PhD, Associate Prof. N. Khachatryan
PhD, Associate Prof. H. Hovhannisyan
PhD A. Babloyan
PhD Y. Melkumyan
PhD M. Karapetyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական գիտական ընկերություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 60) 71 01 94,
Էլ. փոստ՝ sss@ysu.am
ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ www.ssspub.ysu.am.

Ժողովածուն հրատարակվում է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Ժիրայր Մխիթարյան
ԵՊՀ, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ,
Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական
մոդելավորման ամբիոն, ասպիրանտ
Գիտ. ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
էլ. փոստ՝ zhirayr.mkhitaryan@yahoo.com

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Մարդկային հասարակության զարգացումը հազարամյակների խորքից մինչ մեր օրերը տեղի է ունեցել տնտեսական զարգացմանը համընթաց: Այն սկիզբ է առել ագրարային ակունքներից՝ հետզհետե ձևավորելով ինդուստրիալ գետեր (ագրոարդյունաբերություն), լճեր (թեթև արդյունաբերություն և արդյունաբերության այլ ճյուղեր)՝ հետզհետե լցնելով հետինդուստրիալ հասարակական օվկիանոսը:

Հայաստանը 20-րդ դարասկզբին բնութագրվում էր որպես հետամնաց ագրարային երկիր: Հետագա տասնամյակների ընթացքում գյուղատնտեսության և արդյունաբերության բուռն զարգացման արդյունքում Հայաստանը 20-րդ դարավերջին արդեն վերածվեց ինդուստրիալ պետության, որի համախառն արտադրանքի շուրջ կեսը տրվում էր արդյունաբերության կողմից: Սակայն տեղի ունեցած դրամատիկ փոփոխությունների արդյունքում Հայաստանը 21-րդ դար թևակոխեց ոչ որպես ագրարային, ոչ որպես ինդուստրիալ, ոչ էլ որպես հետինդուստրիալ երկիր: Էվոլյուցիոն տնտեսական զարգացման այժմյան հրամայականն է դնել գյուղատնտեսությունը տնտեսական քաղաքականության կենտրոնում՝ որպես ելակետային ճյուղ, որի հենքի վրա կապահովվի ագրոարդյունաբերության, այնուհետև՝ ողջ արդյունաբերության զարգացումը, ինչն էլ երկարաժամկետ հատվածում հետինդուստրիալ հասարակությանն անցման միակ երաշխիքը կարող է հանդիսանալ:

Այս գործում կարևոր է Սահմանադրության դերը, մյուս կողմից՝ գյուղատնտեսության զարգացումն ինքնին կարևոր գործոն կլինի ՀՀ սահմանադրականության հաստատման ճանապարհին՝ թույլ տալով, որ Սահմանադրությամբ նախատեսված բազմաթիվ նորմեր (ինչպիսիք են՝ կրթության, բժշկական օգնության և սպասարկում ստանալու, բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանները բարելավելու, հանգստի, աշխատանքի ընտրության, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքները և այլն[1]) դառնան ապրող իրողություն գյուղացիների՝ հայաստանյան հասարակության ամենամեծ դասի համար:

Պարզենք, թե որն է ՀՀ գյուղատնտեսության գլխավոր հիմնախնդիրը և ինչպիսի սահմանադրական լուծում է անհրաժեշտ առաջադրել նրան:

ՀՀ գյուղատնտեսության գլխավոր հիմնախնդիրը: Հովհաննես Թումանյանը Հայաստանի օգնության կոմիտեի իր կոչում ասում է. *«Խաղաղություն գտնելով գործի է անցել և ինքը, մեծ տառապյալը, Հայաստանի իսկական տերը, հայ գյուղացին: Սովը, սուրն ու ավերածությունը չեն ընկճել նրա հանրահռչակ տոկունությունն ու շինարար ոգին: Նա բազմաթիվ զոհեր է տվել, բայց չի լքում պապենական օջախը... կանգնած է հայրենի դաշտի վրա ու կանգուն էլ պիտի մնա, ինչքան իշխանություններ էլ գան ու գնան»*[2]: Դժբախտաբար, ամենայն հայոց բանաստեղծը սխալվեց իր կանխատեսումներում, հայ գյուղացին կանգուն չմնաց հենց 1990-ական թթ. սկզբից, առաջին իշխանությունների գալուստի պես, այլ բռնեց զանգվածային արտագաղթի ուղին, գյուղերն սկսեցին դատարկվել, դպրոցական դասարանները փակվել, գյուղական բնակչության սեռատարիքային կազմը ձևախեղվել, սկսեց ձևավորվել Հայաստանի գյուղերի «կարմիր գիրքը»:

1991 թ. ընդունված «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների» մասին օրենքով սկիզբ դրվեց Հայաստանում հողի սեփականաշնորհման գործընթացը՝ առաջինը հետխորհրդային երկրների շարքում: Կայծակնային արագությամբ հողի սեփականաշնորհումը պայմանավորված էր ավելի շուտ քաղաքական, քան տնտեսական դրդապատճառներով, որը հետագայում ձևակերպվեց որպես «ոչ թե հողը գյուղացուն տալու, այլ գյուղացուն հողին տալու քաղաքականություն»:

Նախկին 860 կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների փոխարեն ձևավորվեցին մոտ 340 հզ անհատական գյուղացիական տնտեսություններ (որոնցից 300 հազարը դեռևս 1991 թ. ընթացքում[3]),

---

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), 2005, հոդվ. 32, 33, 33.1, 34, 38, 39, 48 (կետ 12) (հասանելի է http://www.arlis.am/documentview.aspx?docID=75780 հղմամբ):
[2] Տե՛ս **Թումանյան Հ.,** Ընտիր երկեր, Երևան, «Սովետական գրող», 1978, էջ 496:
[3] Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ԱՎԾ, 1996, էջ 7:

որոնց միջին հաշվով բաժին ընկավ 1.38 հա հողատարածք՝ տեղակայված 3-4 առանձին հողակտորներում[1]:

1990 թ. համեմատությամբ 1994 թ. գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռն ընդհանուր տնտեսությունում զբաղվածների կառուցվածքում կրկնապատկվեց (17.7%-ից՝ 33.9%), ինչն աննախադեպ հասարակական հետընթաց էր[2]: Գյուղատնտեսությունը, փաստորեն, վերածվեց արդյունաբերության և տնտեսության այլ ոլորտներից ազատվող բազմահազարանոց աշխատուժի ավելցուկը կլանող «բարձիկի», ինչը, միաժամանակ, ուղեկցվեց գյուղատնտեսության ոլորտում աշխատանքի արտադրողականության շեշտակի անկմամբ[3]:

Հողի սեփականաշնորհման (1991-1992 թթ.) և ագրոարդյունաբերական համալիրի մյուս օղակների (վերամշակող և մատակարարող արդյունաբերության, մթերող և առևտրային ձեռնարկությունների) սեփականաշնորհման (1996-2000 թթ.) միջև ձևավորված ժամանակային խզման հետևանքով հայ գյուղացին մնաց մեն-մենակ ոչ միայն արտադրական, այլև՝ իրացման հոգսերի հետ[4]:

Հայաստանի նման սակավահող երկրի գյուղատնտեսության օգտագործելի հողային ֆոնդը շուրջ 1.2 մլն հողակտորների բաժանելը՝ միջինում կես հեկտարը չգերազանցող մեծությամբ, քաղաքատնտեսական կարճատեսություն էր, որն օրախնդիր շահերից զատ, միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում տնտեսության տվյալ կարևորագույն ճյուղի զարգացման որևէ հնարավորություն չէր թողնում: Արդյունքում Հայաստանի ապրանքային ինտենսիվ զարգացող գյուղատնտեսությունը հաշվված տարիների ընթացքում վերածվեց նահապետական կարգերով գործող, ձեռքի աշխատանքի վրա հիմնված բնամթերային տնտեսության, որի թողարկած արտադրանքի 2/3-ը[5] սպառվում էր հենց տնտեսությունների կողմից[6], իսկ «միկրոսկոպիկ» հողատարածքները բացառում էին գյուղատնտեսական տեխնիկայի կիրառությունը (հանրապետությունում առկա գյուղտեխնիկան հարմարեցված էր խոշոր տնտեսություններում աշխատանքների իրականացմանը, որի սեփականաշնորհումն, ի դեպ, իրականացվեց խիստ անկանոն և արդյունքում անհասանելի դարձավ շատ գյուղացիական տնտեսությունների համար), գյուղատնտեսության ինտենսիվ զարգացումը, մասնագիտացումը և տվյալ ոլորտի զբաղվածների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավումը: Իրականացված «բարեփոխումների» արդյունքում մեքենայացվում են նախկինում իրականացվող մեքենայական աշխատանքների 20%-ը[7], ոռոգվում են նախկինում ոռոգվող հողատարածքների շուրջ կեսը[8], իսկ սակավահող Հայաստանի վարելահողերի շուրջ 1/3-ը[9] դուրս է մնացել գյուղատնտեսական շրջանառությունից՝ գլխավորապես գյուղացիական տնտեսությունների համար ձեռնտու չլինելու պատճառով:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի հետ կատարվածը հակիրճ կարելի է ամփոփել հետևյալ կերպ. *«իշխանական մուրճի մեկ հարվածով ՀՀ գյուղատնտեսությունը ներկայացնող հայելին բաժանվեց հարյուր հազարավոր մանր կտորների, որոնք հավաքելու համար կպահանջվեն տարիներ, բայց անգամ այդ դեպքում հայելին իր նախկին տեսքը չի ստանա»*:

ՀՀ գյուղատնտեսության գլխավոր հիմնախնդրի լուծման սահմանադրական ուղին: Ինչպես նկատելի է, հայ գյուղի առջև ծառացած գլխավոր հիմնախնդիրը գերմասնատվածությունն է, որի լուծումը մեկն է՝ գյուղատնտեսական նշանակության հողերի խոշորացումը, ինչն արդյունավետորեն կարող է իրականացվել միայն մեկ ճանապարհով՝ գյուղացիական տնտեսությունների միջև կոոպերացիայի բուռն զարգացման միջոցով:

20-րդ դարի երկրորդ կեսերին ձևավորվեց և սկսեց արագորեն զարգանալ նոր գիտաուղղություն՝ սահմանադրական տնտեսագիտությունը: Այդ ուղղության ձևավորման համար նրա հիմնադիրը՝ տնտե-

---

[1] Տե՛ս Գյուղացիական տնտեսությունների, առևտրային կազմակերպությունների քանակը և գյուղատնտեսական հողատեսքերը 2006 թվականի հունվարի 1-ի դրությամբ, ՀՀ ԱՎԾ, 2006, էջ 3; **Նախշիկյան Ա., Թևոսյան Ա.** Գնագոյացումը գյուղատնտեսական մթերքների շուկայում, Աշխատանքային փաստաթուղթ, ՀՀ Կենտրոնական բանկ, Երևան, 2002, էջ 6:

[2] Տե՛ս **Նախշիկյան Ա., Թևոսյան Ա.,** 2002, էջ 5:

[3] Տե՛ս «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր», Երևան, 2003, էջ 19:

[4] Տե՛ս **Մանասերյան Ն.,** Ագրարային հարցը երեկ և այսօր, Երևան, Տնտեսագետ, 2005, էջ 98:

[5] Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ԱՎԾ, 1996, էջ 8:

[6] *Ներկայումս էլ գյուղատնտեսական արտադրության ապրանքայնությունը գտնվում է բավական ցածր մակարդակում: 2013 թ. այն կազմել է 56.4 % (ներառյալ նաև բարտերային գործարքները), իսկ մնացած մասն ուղղվել է գյուղացիական տնտեսությունների ներքին օգտագործմանը* (Տե՛ս Գյուղատնտեսական մթերքի իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից 2013 թվականին, ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 2):

[7] Տե՛ս **Մանասերյան Ն.,** 2005, էջ 114:

[8] *Ներկայումս ոռոգվող հողատարածքները կազմում են 154.2 հազար հա (գյուղատնտեսական նշանակության հողերի 7.5%-ը)՝ 1990-ական թթ. 275 հազար հա-ի համեմատ: Արդյունքում տեղի է ունենում գյուղատնտեսական հողերի որակական հատկանիշների կորուստ՝ իր բոլոր երկարաժամկետ բացասական հետևանքներով* (Տե՛ս ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2013 թվականի հաշվետվության մասին ՀՀ Կառավարության 17.11.2013 թ. N 1184-Ն որոշում):

[9] *2012 թ. դրությամբ 448.4 հազար հա վարելահողերի պայմաններում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 304.2 հազար հա, այսինքն՝ նպատակային չի օգտագործվել վարելահողերի 32.2%-ը* (Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 296-300):

սագետ Ջեյմս Բյուքենենը 1986 թ. արժանացավ Նոբելյան մրցանակի[1]: Ըստ Բյուքենենի՝ սահմանադրական տնտեսագիտության գլխավոր տարբերակիչ առանձնահատկությունը սովորական, ոչ սահմանադրական տնտեսագիտությունից այն է, որ այն կենտրոնանում է կանոնների *միջև* ընտրության կատարման վրա՝ ի հեճուկս երկրորդի, որի ուշադրության առարկան առկա կանոնների *շրջանակներում* կատարվող ընտրություններն են[2]: *Տվյալ պարագայում խոսքն առնչվում է հետևյալ երկու կանոնների միջև ընտրությանը՝ մասնատված գյուղացիական տնտեսություններ, թե՞ գյուղատնտեսական կոոպերատիվներ: Հենց հարցադրումն ինքնին ցույց է տալիս, որ այս քննարկումը գտնվում է սահմանադրական տիրույթում:*

Հայաստանն աշխարհի այն փոքրաթիվ երկրներից է, որը, մի կողմից, բնութագրվում է խիստ սակավահողությամբ, մյուս կողմից՝ գյուղատնտեսության ոլորտում զբաղված է ողջ տնտեսությունում զբաղվածների 37 %-ը[3] (2012 թ.), իսկ գյուղերում՝ տնային տնտեսությունների 77 %-ը[4] (2008 թ.) և այդ ոլորտի ավելացված արժեքը կազմում է ՀՆԱ-ի 22 %-ը (2013 թ.): Համեմատության համար՝ ԱՄՆ-ում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են ընդհանուր տարածքի 45 %-ը, այս ցուցանիշը տալիս է ՀՆԱ-ի 1.2 %-ը և նրանում զբաղված է տնտեսությունում զբաղվածների 1.6 %-ը: Մեծ Բրիտանիայի համար այս ցուցանիշները կազմում են, համապատասխանաբար, 71 %, 0.7 % և 1.2 %, Ֆրանսիայում, որը ողջ աշխարհում հայտնի է իր գյուղատնտեսական արտադրանքով՝ 53 %, 1.9 % և 2.9 % և այլն[5]: Այդ իսկ պատճառով զարգացած, ինչպես նաև զարգացող շատ երկրներում չկա նման սահմանադրական կարգավորման անհրաժեշտություն և Հայաստանի Հանրապետության պարագայում այն ամբողջությամբ բխում է ներքին իրողությունից:

Այնուամենայնիվ, միջազգային սահմանադրական փորձն այս առումով այնքան էլ աղքատ չէ: Մասնավորապես, Հունաստանի Սահմանադրությունում ամրագրված է, որ պետությունը պարտավորվում է հոգ տանել գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման նկատմամբ (հոդված 12, կետ 4): Նիկարագուայի Սահմանադրության համաձայն՝ պետությունը պետք է խթանի գյուղացիների կամավոր ասոցացումը գյուղացիական կոոպերատիվներում և իր ռեսուրսներին համապատասխան պետք է աջակցի նյութական միջոցներով, որոնք անհրաժեշտ են նրանց տեխնիկական և արտադրական ունակությունների բարձրացման համար՝ գյուղացիների կենսամակարդակի բարելավման նպատակով (հոդված 109): Ըստ Պանամայի Սահմանադրության՝ ագրարային քաղաքականության նպատակների բավարարման համար պետությունը պետք է խթանի արտադրության, բաշխման և սպառման համար կոոպերատիվների հիմնադրումը (հոդված 126, կետ 3): Պարագվայի Սահմանադրության համաձայն՝ գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը պետք է խթանվի պետության կողմից (հոդված 114): Հատկապես հատկանշական է Պորտուգալիայի Սահմանադրությունը, որը նախատեսում է շատ մեծ գյուղացիական տնտեսությունների բացառման և շատ փոքրերի վերաչափման կարգավորումներ: Վերջինս նախատեսում է, որ առանց սեփականության իրավունքը վնասելու, պետությունն օրենքի համաձայն պետք է նպաստի գյուղատնտեսական քաղաքականության նպատակների տեսանկյունից նպատակահարմար չափերից փոքր գյուղատնտեսական միավորների չափերի վերանայմանը, ինչը պետք է իրականացվի իրավական, ֆիսկալ (հարկային) և վարկային խթանների միջոցով՝ նրանց կառուցվածքային կամ զուտ տնտեսական ինտեգրման համար՝ մասնավորապես կոոպերատիվների տեսքով կամ հողակտորները միավորելուն միտված միջոցներով (հոդված 95):

Այսպիսով, հիմնվելով ներքին իրողությունների, ինչպես նաև միջազգային սահմանադրական փորձի վրա՝ առաջարկվում է ներդնել նոր սահմանադրական նորմ ՀՀ Սահմանադրությունում՝ «պետությունը խթանում է գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումը»: Այն առաջարկվում է ներդնել որպես «տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են…» հոդվածի (հոդված 48) նոր կետ՝ հետևյալ ձևակերպմամբ՝ *«խթանել գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումը»:* Այս նորմի սահմանադրական ամրագրմանը կհաջորդեն օրենսդրական և ծրագրային ճյուղավորումները, որոնց կյանքի կոչումը մեծ ներդրում կունենա Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացման և սահմանադրականության կայացման ճանապարհին:

---

[1] Տե՛ս Նոբելյան մրցանակի պաշտոնական կայք-էջը http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1986/buchanan-facts.html հղմամբ:

[2] Տե՛ս **Buchanan J.M.,** The Domain of Constitutional Economics, Constitutional Political Economy, Vol. 1, No. 1, 1990, էջ 2-3:

[3] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 59:

[4] Տե՛ս Գյուղական համայնքների հետազոտության հիմնական արդյունքների մասին հաշվետվություն, ՀՀ ԱՎԾ, 2009, էջ 8:

[5] Տե՛ս Համաշխարհային բանկի տվյալների հենք (հասանելի է www.databank.worldbank.org հղմամբ):

Ժիրայր Մխիթարյան

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Բանալի բառեր՝ սահմանադրական տնտեսագիտություն, սահմանադրական կանոններ, գյուղատնտեսություն, հիմնախնդիրներ, սահմանադրական լուծումներ

ՀՀ գյուղատնտեսության զարգացումն ունի անկյունաքարային նշանակություն սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, ազգապահպանման, ազգային անվտանգության և այլ առումներով: Աշխատանքում վեր է հանվել ՀՀ գյուղատնտեսության գլխավոր հիմնախնդիրը, նախանշվել զարգացման միակ ուղին, այն է՝ կանոնների փոփոխությունը՝ անցումը գերմասնատված գյուղատնտեսական համակարգից խոշոր կոոպերատիվների վրա հիմնված համակարգի: Առկա կանոնի շրջանակներում իրականացվող մնացյալ բոլոր քայլերը դատապարտված են՝ պայմանավորված գործող տնտեսությունների անկենսունակությամբ: Առաջարկվում է իրականացնել համապատասխան սահմանադրական փոփոխություն:

Жирайр Мхитарян

КОНСТИТУЦИОННЫЙ ПУТЬ РАЗВИТИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА В РА

Ключевые слова: конституционная экономика, конституционные правила, сельское хозяйство, проблемы, конституционные решения

Развитие сельского хозяйства в РА имеет важное значение в социально-экономических, демографических аспектах и в аспектах сохранения нации и национальной безопасности. В работе была определена главная проблема сельского хозяйства РА и предложен единственный путь его развития, т.е. изменение правил – переход от сверхрасчлененной сельскохозяйственной системы к системе, базированной на крупных кооперативах. В рамках действующего правила, все остальные предпринятые шаги обречены на провал, поскольку действующие хозяйства нежизнеспособны. Нами предлагается осуществить соответствующие изменения и принять конституционные решения.

Zhirayr Mkhitaryan

CONSTITUTIONAL WAY OF THE DEVELOPMENT OF THE AGRICULTURAL SECTOR IN THE RA

Keywords: constitutional economics, constitutional rules, agricultural sector, problems, constitutional solutions

The development of the agricultural sector of the RA has a key role in the social-economic, demographic aspects as well as in the aspects of national preservation and national security. In this work, the main problem of the agricultural sector of the RA was revealed, and the only way of the development was outlined, namely, the transition from hyper-fragmented agricultural system to a big cooperatives-based system. All the remaining attempts under the current rule are fated because of the non-viability of the current entities. Appropriate constitutional amendments are suggested.